վորությունն արդեն վերացել է։ Երբ եկեղեցում սկսում էին երգել «Քրիստոս հարյավ 'ի մեռելոց», երեխաներն սկսում էին ճռռան ճռռացնել, անշուշտ նույն նպատակով, ինչ որ Ծաղկազարդին. այն է՝ չար օգիներին փախցնելու համար։ Երեխա թե հասակավոր, ներկած ձվերով կրովրկան էն աամ (ձուն ձվին էին խփում)։ Առաջ խփում էին պրտօկավ՝ սուր ծայրով, ապա կոտրված ծայրը դարձվում էր և խփողը խփում էր ֆունային՝ բութ ծայրին։ Երկու ծայրերից կոտրված ձուն ստանում էր տանողը։ Երիտասարդները հրացաններով նշան խփի էին խաղում։

Այսպիսով, Մեծ պասի վերջին շաբաթվա սովորությունների մեջ մեծ տեղ էին գրավում այն միջոցառումները, որոնցով չար աչքի, կամ չարություն գործելու ուժ ունեցող իրերի, օրինակ՝ բողոճի դեմ պայքար էր մղվում և չարքերը հեռու էին վանվում ճռռանձէրավ և այլ միջոցներով։ Նույնպես ամեն կերպ ձգտում էին հարություն առած բնության զորությունից իրենց համար բաժին ստանալ։

Մրոբլօց։ Զատկի երկուշաբթին մրոբլօց էր։ Գնում էին հանգստարան, ամեն տեսակ կերակուր և գինի հետները վերցրած, այս ամենը դնում էին կամ ուղղակի գերեզմանի վրա, կամ կողքին սփռոց ձգած սեղանի վրա։ Գերեզմանն օրհնելուց հետո ամբողջ բերածը պիտի այդտեղ ուտվեր։ Մնացորդը բաժանվում էր աղքատներին։ Ամեն անցորդին համեցեք էին անում ննջեցյալների հոգեթաս։

Կանանչ գիրակի։ Հաջորդ կիրակին, որ կոչվում էր Կանանչ գիրակի, Կրկնազատիկն էր։ Գրեթե բոլոր գյուղերից շաբաթ օրվանից գնում էին մերձակա մի խաչ՝ ուխտատեղի, օրինակ՝ Արծվանիկից Ղրզլդա-Կրմբրաֆար՝ Կարմիր վանք։ Հալիձորից՝ Տաթև, Գորիսից՝ Նորակնունք եկեղեցի—Վերիշեն գյուղի տակ։ Կարմիր խաչը շատ դժվար ելանելի մի քրատակ է, խոր ձորի վրա Ծակեձորի բօղազում՝ մուտքի մոտ, հին եկեղեցու ավերակներից վեր։ Բնունիսի՝ Բընունու Սրփ Կակօփ՝ Հակոբ, Ղուռուշա, որ մի դոլմեն է, որին դիմում էին քամուց, աչքացավից և ընջուկացավից՝ ականջի ցավից, ազատվելու համար, գնում էին բոբիկ ոտով և վերադառնալիս ետ-ետ էին գալիս կամ Գորիս գյուղի մոտ գտնվող Նրնատակ և Սրփ Մրտոնրիսի քրատակները։ Այդ խաչերում Կանանչ գիրակի օրը տեղի էին ունենում մատաղ, պարեր, ձիարշավ, մրցություններ, հրացանաձգություն՝ ձվի կամ այլ նշանի վրա, երբեմն ֆանդիրբազի խաղէր՝ լարախաղացություն։

Կարմիր գիրակի։ Նրանք, որոնք որևէ պատճառով Կանանչ գիրակի օրը խաչ չէին գնացել, շատ անգամ նաև պակասավորներն ամաչելուց չէին գնում, գնում էին հաջորդ՝ Կարմիր գիրակի օրը՝ իրենց հետ բերելով մի-մի վօրձակ կամ զույգ ձու, մի քանի մոմ, որ խաչից զուրկ չմնան։ Բնության ուժի վերջնական հարությունից հետո կարծես ավելի զորություն էին ստանում բոլոր խաչերը, որոնց օգնությանն էին դիմում։

Համբարձում։ Մինչև Համբարձում քառասուն օր ոչ մի տոն չկար, բացի սովորական կիրակի օրերից։ Այդ քառասունքը հիշեցնում է նորածին մանկան համար մոր պահած քառասունքը։ Համբարձման չորեքշաբթի երեկոյան իլիբիստրի կոչված խոտը կրշկրռում, այսինքն՝ արմատից վեր մեկ բաց ձեռնաչափ—մի կէղ՝ թիզ չափում էին և գունավոր թել կապում։ Առավոտյան գալիս էին և նորից չափում։ Եթե երկարացած էր լինում, դա նշան էր, որ թել կապողի կյանքը երկար կլինի։ Աղջիկները գիշերը խոտերից և ծաղիկներից